

ՎԵՅԱՊԱՆԾ ՃԱՍԲԱՆ՝

Ս Է Ր Ը

THE MAJESTIC AND TRUE LOVE

ԱԼՊԵՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ԳԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

1998

ՄԻՐՈՅ ՄՈՒՏՔԸ

Մարդկային լեզուն՝ մտածողութեան տեսանելի մարմնացումն է և արտայայտութեան միջոցը: Լեզուն մտքի արտաքինն է, իսկ սիրելը՝ *հոգևոյ*: «Լեզուն խորհող մտքին *ձայնաւոյ*: նշանն է»: «Մարդկային խօսողութեան գործիքը»--**Արսեն Այսընեան**: Մարդկային լեզուն հասարակական հաղորդակցութեան կարեւորագոյն և համընդհանուր միջոցն է և մտածողութեան *նիւթականացած* ձեւը:

Լեզուն՝ ոեւէ ժողովուրդի մը համար, իր ամենասիրելի ինչքն է, իր հոգւոյն հարազատ արտայայտութիւնը, իր պատմութեան պատկերը, իր հաւաքական խառնուածքին խտացումը: Լեզուն կրնայ ըլլալ ջատ անուշ կամ դառն, ջատ օգտակար կամ վնասակար, հրաշագործ կամ ֆանդիչ, նայած թէ ո՞վ և ինչպէս կը գործածէ զայն: Մտքի լեզուակա՞ն արտայայտութիւն, թէ փորձառական ապրումի արտայայտութիւն՝ Պղատո՞ն, թէ Յիսուս՝ Սիրոյ առարկայական Յայտնութիւնը:

Իմաստասէրներ իրե՛նց արտայայտչական կարողութիւնը ցոյց կու տան *մտքի*՝ բարձրագոյն աղբիւրէն: Իսկ աստուածայայտնիչ Յիսուս կը խօսի մարդկային *սրտին* ու *հոգւոյն*: Անոր թակող Ձեռներուն մէջ չկան կայծակնաբոց նետեր, ա՛յլ խոցուած ու փրկարար ողորմութեա՛ն հրաւերներ: Յիսուսի գլխասիրտ Ձեռները որ բժշկեցին կոյրին աչքերը ու մաքրեցին բորոտներու նեխած մարմինները երբ դպչին մարդկային հոգեկան թելերուն, հոն կը ստեղծեն երածշտութիւն, ուրախութիւն փրկութիւն և խաղաղութիւն:

Յիսուսի մէջ աղփատութեան սէրը ճգնաւորական ցուցամոլութեան ամբարտաւան զգեստ մը չէ: Յիսուս ամենէն աւելի կը սիրէր, այն աղփասները, որոնք Արեւայութեա՛ն սիրոյն համար աղփատ եղան: Յիսուս Քրիստոս մեր մարդկային կեանքին մէջ տարրացած սիրոյ էութիւն դառնալու է: Յիսուս երկար չապրեցաւ, սակայն Իր ապրումով ու սիրո՞վ ապրեցուց ուրիշները:

զԱստուած՝ Յիսուսի՛ ապրումին մէջ կը տեսնենք, Անո՛ր մէջէն կը դիտենք, Անո՛ր միջոցով կը ճանչնանք, Անոր Սուրբ Սիրո՛յն պարտ ենք հաւատալ, ու ո՛չ մեր հեթանոսածին կարծիքներով: Խաչեցեալին արիւնը, հոսելով խաչն ի վար, տարածուեցաւ երկրի վրայ և ուրուագծեց Ա. Եկեղեցիին սիրո՛յ ընթացքը և ուղին: Քրիստոնէութեան «Ի՞նչ»ը չէ որ քրիստոնէան պիտի ազատագրէ մահէն, այլ՝ անոր «**ի՞նչպէ՞ս**»ը: Այս «ի՞նչպէ՞ս»ը՝ ո՛չ թէ մտքին հաւատն է, այլ անձնագոհ սիրո՛յ հանդուրժողութիւնը: Քրիստոնէութիւնը՝ ոմանց համար կրօնասիրական ճառ է կամ դաւանական մարզանք..., գործնական հրիստոնէութիւնը՝ *ընկերը սիրե՛լ* և իրեն նման չմտածողին հանդէպ *հանդուրժող ոգի՛* ունենալ է: Քրիստոնէութիւնը

կառուցում է Յիսուս Քրիստոսի զոհաբերության խորհուրդին վրայ:
Հրեաները նշան կ'ուզեն, Յոյները իմաստութիւն, իսկ առաքեալները կը
բարոզեն «Խաչեալ Քրիստոսը»՝ *անձ նազոնութիւն*, որ սիրո՛յ և հանդուր-
ժողութեան առարկայական իրագործումն է:

***Կեանքի իսկական գեղեցկութիւնն ու զօրութիւնը
սիրելու հրաշագործ արտայայտութեան մէջ կը կայանայ:***

Աստուած օրհնէ այս գրքոյկին խօսքերը բոլոր ընթերցողներու սրտերն
ներս:

**Ա. Նորատունկեան
Նոյեմբեր 15, 1998
Քորոնթօ**

Վ Ե Յ Ա Պ Ա Ն Ծ Ճ Ա Մ Բ Ա Ն՝ Ս Է Ր Ը

Ա Կորնթ. Գլուխ ԺԳ.1-13

**Եթէ խօսիմ մարդոց և հրեշտակներուն
լեզուները, բայց սէր չունենամ:**

Հաւատ՞ առ Աստուած, արուեստի բոլոր մարգերուն մէջ, դարձած է բանաստեղծութիւն, քանդակ, իմաստասիրութիւն նկարչութիւն, գրականութիւն կամ գեղարուեստ: Բանաստեղծութիւնը շնորհի մըն է, որուն կ'արժանանան սակաւաթիւ ընտրեալներ: Բանաստեղծութիւնը կ'ազդէ մեր զգացումներուն և երեւակայութեան: Զրիստոնէութիւնը, մաքրելով հեթանոս աստուածութեան ծանօթութիւնը, ստեղծեց *երկրպագական և աղօթող ճշմարիտ* բանաստեղծութիւնը: Առանց լուսասփիւռ բանաստեղծութեան, չկայ դիմագիծ ունեցող ազգութիւն: Վկայ՝ ազգերը իրենց ձոմերոսներով, Վիրկիլիոսներով, Տանդէներով, Ծէֆսալիրներով և Կէօթէներով: Իսկ *«Աստուածաշունչը պարզ թարգմանութիւն մը չէ, այլ հայ բանաստեղծութեան, հայ ստեղծագործութեան ջոռմարան մը, թագուհին թարգմանութեանց, և գոհարը հայ գրականութեան»*:--**Գրիգոր Միսալեան:**

Աստուածաշունչն է Մատեանէն կ'ուզեմ մեկնաբանել Պօղոս առաքեալի հոգեշունչ և աստուածիմաստ Բերթուածը, որ կը գտնուի Ա. Կորնթացոց նամակին ԺԳ. գլխուն մէջ:

Մարդ արարած կ'ուզէ դառնալ երկինքին հետ խօսակից և ընկեր մարդոց հետ գրուցակից: Պաղատախառն խօսակցութիւն մը Աստուծոյ հետ ունի իր պարտադիր երկու եզրերը՝ *«խօսիչ»* և *«մտիկ ընել»*: Յոյներ և Հռոմայեցիներ մեծ ջեջտ կը դնէին արտայայտիչ արուեստներու վրայ, այսինքն՝ տրամաբանութեան, հոետորութեան և պերճախօսութեան:

1. Կիկերոն, Տակիտոս և Կուինտիլեան նախնեաց ուսման ամբողջ ծրագիրը պարփակուած է բեմբասացութեան մէջ:
2. Արտայայտութեան արուեստը բարձրագոյն կարողութիւնն էր:
3. Ամէն տպաւորութիւն հարկ էր որ արտայայտուէր:
4. Ուսման թագն ու պսակն էր կարողութիւն խօսելու կամ գրելու:

Կենդանի լեզուն, մարդկային ներքին աշխարհի ամենանուրբ թելերուն կրնայ խօսիլ: *Խորհիչը՝ անձայն խօսիչ է, խօսիչը՝ բարձրանձայն խորհիչ է:* Մարդկային մարմինը հրաշարուեստ պատեան մըն է, որ կը շարժի և կը խօսի. սակայն Անհունին ծարաւն զգացող հոգի մը ունի ան: Մարդ երբեք խաւարին

հետ չի խօսիր, այլ Լոյսին հետ: Խօսի՛նք Աստուծոյ հետ, որ խօսի՛լ սորվինք:

Մարդոց ջանքը միջոտ եղած է հրեջտակներո՛ւ լեզուով խօսիլ, հոնտորներո՛ւ լեզուով խօսիլ, պերճախօսօրէն տրամաբանականօրէն համոզումով և ապացոյցներով կամ դիւանագիտական ամէն տեսակ խաբէութեամբ: Մակայն առանց սիրոյ, առանց զգացումի, առանց արցունքի, առանց անձնագոհութեան և առանց տառապելու, խօսքը ունայն է:

Ի՞նչ կը նշանակէ սէ՛ր ունենալ: Ի՞նչ կը նշանակէ սիրե՛լ: Սիրել գաղափար մը չէ՛, Վարկած մը չէ՛, տեսութիւն մը չէ, այլ սիրել՝ ազատագրել է մարդը: Սիրել՝ սրբագործել է չարիքը ներողամտութեամբ: Սիրելը տառապի՛լ է: Սիրել՝ մօտենալ է Աստուծոյ շոգույն: Բազմաթիւ քրիստոնեաներ կը սիրեն Քրիստոս մը, որ նկար մըն է լոկ, կամ գաճէ արձան մը: Սիրեցե՛ք այն Քրիստոսը՝ որ խաչուեցաւ փրկելու համար համայն աշխարհը:

Աստուած ստեղծեց աշխարհը և անոր լիութիւնը: Ան ստեղծեց գեղեցիկ, ջնորհալի՛ ու սիրագեղ կենդանի՛ աշխարհ մը ուր կեանքը կը ցոլափայլէր և կը հրավառէր և կրնար խորանալ իր իմաստին մէջ: Աստուած չլքեց ու չհեռացաւ աշխարհէն, զբաղելու համար ուրիշ գործերով: Ան սիրած էր աշխարհը իր ամբողջութեամբ: Ան ջնորհած էր աշխարհին ա՛յն հանգամանքը, որ Իր սեփականութիւնն էր, այսինքն Իր ծունչը, ոգին ու իսկութիւնը՝ Իր **ՍԷՐԸ**:

Ս. Խաչելութիւնը, աստուածային այն արարքն է որ ցոյց կու տայ թէ Աստուած խօսելով հանդերձ հրեջտակային լեզուով, չքաւականացաւ համոզել մարդկութիւնը և դարձնել դէպի Իրեն: Աստուած այնքան սիրած էր Իր աշխարհը, մինչեւ Իր Միածին Որդին դրկեց: Ան գործածեց Վեհապանծ Ճանապարհը, որ միակ կամուրջն է առաջնորդելու մարդը դէպի երկինք: Սիրոյ արցունքներն էին որ հաշտեցուցին Անառակ Որդին իր հօրը հետ: Խաչելութեան սուրբ Արիւնն էր, մի միայն որ դարձի պիտի բերէր մեղաւորը ու զայն դարձնէր երկնքի բաղաճացին: Ուստի, Պօղոս առաքեալ կը շարունակէ ըսելով.

**«Կը նմանիմ պղինձի մը՝ որ կը հնչէ,
կամ ծնծղաներու՝ որ կը դօղանջեն»:**

Խաւարը կը խորհրդանշէ անասման անծանօթը և սպառնացող պարապութիւնն ու ունայնութիւնը, որ նման է պղինձի մը ոչ թէ հնչիւնին, այլ **աղմուկին**: Առանց սիրոյ կատարուած աշխատանքն ու գործունէութիւնը նման են օճառի պղպջակներէ ջինուած համբաւներու, գողութեամբ վսեմացած ազնուաշուքներու, ունայնութեան վրայ կառուցուած արժանիքներու: Կեանքէն հիասթափած մարդուն համար ամէն ինչ ունայնութիւն կը թուի, սակայն կա՛յ բան մը՝ որ չէ՛ ընդունայն, **Սրբութիւնն** ու **ՍԷՐՆ** են անոնք:

Ա. Մեսրոպ այբենգիմի գիւտը ըրաւ Հայուն տալու համար այդ Գիրքը՝ Աստուածաշունչը, որ կը սորվեցնէ. **«Սիրեցէ՛ք զմիմիանս»**: Հարկ է որ հաղորդուինք այդ Ոգիին, ու ըլլանք արժանաւոր որդիները մեր նախահայրերուն ու հաւատարիմ ծառաները մեր ազգին: Յիսուսը խաչեցին, որովհետեւ Ան ուսուց ա՛յն տեսակ սէր մը, որ վտանգաւոր էր հասարակ մարդուն, սէր մը որ ամբողջակա՛ն նուիրում և անձնատուութիւն կը պահանջէր:

Կարմիր բանակին յաղթարջաւ գնացփին, Համայնավարները կը փնտռէին կայսերական բանակին պատկանող կին մը որ երկու երախաներ ունէր: Իրիկուն մը երիտասարդ կին մը, **Նաթալի** անունով՝ որ նոյն իր տարիքը ունէր, զարկաւ այս կնոջ տան դուռը և հարցուց, թէ ինք այս ինչ կի՞նն է: Նաթալին զգուշացուց այս մայրը թէ ինք ճանչցուած է ու այս գիշեր պիտի գնդակահարուի: Նաթալին խրատեց որ փախչի: Մայրը նայեցաւ իր զաւակներուն և ըսաւ. "ի՞նչպէս":

Նաթալին որ մինչ այդ թաղին մէջ անծանօթ կին մըն էր միայն, ըսաւ. "Դուն պիտի կարենաս փախչիլ, որովհետեւ ե՛ս պիտի կենամ հոս և յայտարարեմ որ ես ձեր փնտած կինն եմ": Մայրը ըսաւ. "Բայց պիտի գնդակահարեն քեզ": Նաթալին պատասխանեց. "Ես զաւակներ չունիմ":

Յիսուս նոյնը ըրաւ Գեթսեմանիի պարտեզին մէջ:

«Աւելի մեծ սէր ո՛չ ոք ունի, քան այն՝ որ մէկը իր կեանքը կու տայ իր բարեկամներուն համար»:

**«Եթէ մարգարէութեան պարգեւը ունենամ,
կարենամ բոլոր խորհուրդներու խորքը թա-
փանցել և հասնիմ ամբողջական գիտութեան,
...բայց սէր չունենամ՝ ոչինչ եմ»--Ա Կոր. ԺԳ.Զ:**

Մարգարէներուն անձնական կենսագրութիւնները չունինք, այլ միայն անոնց **պատգամը**: "Մարգարէ" յունարէն լեզուով կը նշանակէ. *«Ան որ Աստուծոյ ներշնչումով կը խօսի»*: Տիտան դէմքեր էին մարգարէները՝ **Նաթան, Եղիա, Եղիսէ, Ամովս, Եսայի և Երեմիայ**: Աստուածաշունչին մէջ, մարգարէն Աստուծոյ պատգամախօսն էր, որ պատմական որոշակի կացութեան մը մէջ Ա. Հոգիին ներշնչումով Աստուծոյ կամքն ու վճիռները կը յայտնէր: Անոր ժողովուրդին: Յովհաննէս Մկրտիչ Բարոզեց ոչ որպէս Բահանայական սերունդէ սերած Բարոզիչ, այլ որպէս աստուածառափ մարգարէ: Յովհաննէս Մկրտիչի պատգամը աւելի վախճանական էր: Ապաշխարութեամբ և կեանքի փոխակերպութեամբ մարդ կարելիութիւնը ունի ազատուելու Աստուծոյ դատաստանէն: Ներքին Գերմարդկային Ջայն մը կոչած է միշտ մեծ մարգարէները: Անոնք բարոյական սկզբունքը աւելի վեր

դասած են պաշտամունքային անիմատ Ծէսերէն և կենդանիներու զոհաբերութենէն՝ մատաղներէն:

Հայերէն *մարգարէ* համեմատական կցորդն է Լատիներէն Mercurius-ի որ Հռոմէական դից բանագնացն էր: Իբր բանագնաց Աստուծոյ, պաշտօնեայ և կրօնապետ: Մարգարէներու գիրքերը քաջարի արտայայտութիւններն են Հին Կտակարանի կրօնական քաջ ոահովիրաներուն: Անոնք կը շեշտեն չորս յոյժ կարեւոր իրողութիւններ՝

1. Աստուած ամենակալ Տէր է, Ղեկավար «բնութեան և մարդկային պատմութեան»:
2. Աստուած սուրբ է, և սրբութիւն ու արդարութիւն կը պահանջէ մարդոցմէ:
3. Մեղքը բաժանում է Աստուծմէ, և մեղքն է անհատներուն, ժողովուրդներուն և ազգերուն կործանման բուն պատճառը:
4. Մեղքը չի ջնջուիր կենդանիներու զոհերով և նուէրներով այլ կը ներուի առ Աստուած վերադարձով՝ զղջումով, խոստովանութիւնով ու խոնարհութիւնով՝ ապաշխարութեամբ:

Հրեայ մարգարէներուն պատգամը կը սկսէր. *«Տէր Աստուած այսպէս կ'ըսէ»*, իսկ Յիսուս Քրիստոս պատգամեց. *«Ես կ'ըսեմ ձեզի»*: «Մովսէսի Օրէնքը և մարգարէներու ուսուցումները մինչեւ Յովհաննէս ի գօրու էին»--Յիսուս--**Ղուկ. ԺԶ. 16**: Աստուած աստիճանաբար (progressively) յայտնացուցուց սկզբնական արարչագործութեան խորհուրդը և Ինքզինք Հին Կտակարանի մարգարէներուն: Հին Կտակարանի մէջ աստուածայայտնութիւնը կը սկսի Մովսէսի օրէնքներով, կը զարգանայ Մարգարէներու մէջ, կը բարձրանայ և կը յառաջդիմէ երկնաբարձ գագաթներ մարգարէութեան մէջ ու գերագոյն կատարին կը հասնի Յիսուսի Մարդեղութեամբ, Անոր ապրումով և զոհողութեամբ՝ *սրբարար Խաչելութեամբ*:

«Յիսուսի մասին, խօսելով ու կեանքով վկայելն է բուն մարգարէութեան հոգին», Գրքաբարդ ունի. «Որովհետեւ այդ տեսիլքը և մարգարէական հոգին Յիսուսի կողմէ հաստատուեցաւ, քանի որ մարգարէներ Սուրբ Հոգիին միջոցաւ էր որ Յիսուսի մասին վկայութիւն տուին»:--Յայտ. ԺԹ. 10:

Աստուած մարդը հաւասար ստեղծած է, սակայն իւրաքանչիւրին զանազան պարգեւներ և կարողութիւններ տուած է: Մարգարէութիւնը նոյնպէս Աստուծոյ սպասաւորներուն սրուած յաւելեալ շնորհ մըն է: Պարգեւը նորունիլ միաժամանակ *պատասխանատուութիւն* տանձնել կը նշանակէ: Մարդկային միտքը գերագոյն և գեղեցկագոյն պարգեւներէն մէկն է, որ Աստուած շնորհած է Իր սիրած մարդուն:

Մարդ, երբ իր մտածողութեամբ հպումը ունենայ Տիեզերական Մտքին, այն ժամանակ կը թափանցէ խորհուրդներու խորքը հասկնալու համար ամբողջական գիտութիւնը: Պօղոս առաքեալ իր համատարած տեսիլքին մէջ

իսկ ականատես կ'ըլլայ վեհագոյն արժանիքին ու կը կոչէ զայն **ՍԷՐ** :

Ինչո՞ւ սէրը գերագոյն բարեմասնութիւնն է քրիստոնեային:

Սէրը այն հզօրագոյն միջոցն է, որով բնութիւնը կ'ապահովէ կեանքի շարունակութիւնը սերունդէ սերունդ: Աստուծոյ Միտքը յայտնուած է Իր սիրոյն մէջ և Աստուած խօսեցաւ աշխարհի հետ սիրո՛յ լեզուով՝ Յիսուս Զրիստոսի անձնանուէր ու անձնագոհ ապրումով, խոնարհութեամբ ու ծառայութեամբ: Գողգոթան՝ դարձաւ վիշտին սրբութիւնը, հաւատքին գօրութիւնը և սիրոյ ծանդագործող երկունքը: Յիսուսի Մարդեղութիւնը՝ խորհրդագգաց յայտնագրութիւնն է անհննելի Հօր Աստուծոյ քաղցրահայեաց ու խորածածուկ խորհուրդին: Յիսուսի Ս. Խաչելութեամբ, պատուեցաւ հազար տարիներու երուսաղէմ տաճարին խաւառակուռ վարագոյրը, յայտնաբերելու համար Աստուծոյ սէրը:

Աստուածային ստեղծագործ սէրը ինչպէս որ խոնարհեցաւ (իջաւ), աշխարհ պարզեւելու սէր և իմացական կեանք մարդ արարածին, մարդ՝ ի՛նք եւս նոյնպէս *բարձրանալու* է դէպի տիեզերական Սէրը և Կեանքը ուր պիտի գտնէ իր Արարիչը և Տէրը: Սէր բառը չէ եղած *Քարոզուելու* համար, այլ՝ *կիրթուելու էլ ո՛ւ* համար: Սիրոյ համար գոյութիւն չունին ժամանակ, տեղ, ազգութիւն, կրօն, գաղափար, վիճակ, տարիք և գեղեցկութիւն:

«Եւ հասնիմ ամբողջական գիտութեան»...

20րդ Դարը դարձած է "գիտութեան" դարը: Գիտութիւն բառը չակերտուած գրած եմ, որովհետեւ 20րդ Դարու գիտութիւնը, միայն **նիւթազաշտակա՛ն** գիտութեան Դարն է: Մարդիկ փոխանակ ուսումնասիրելու հոգեւոր, բարոյական, գաղափարական և ընկերասիրական գիտութիւնը, մշակեցին ու զարգացուցին նիւթի՛ն գիտութիւնը և անոր գօրութեամբ ստեղծեցին հանրավնաս նուաճումներ: Գիտաշխարհը, այսօր, լծուած է արդիական զէնքեր արտադրելու (մարդ սպաննելու) գործին:

Անաստուածներ աւելի *փաստ և բացատրութիւն* կը փնտոեն կամ կը հետապնդեն, քան թէ *յայտնութիւն, ապացոյց և վկայութիւն*: Գիտնականներ իբր թէ ձեռք ձգած են 13 հազար տարի առաջ Հրատէն զատուած և չորսուկէս միլիառ տարի հնութիւն ունեցող երկնափար մը, գետնախնձորի մեծութեամբ, որ կը պարունակէ *քրաժոյ*, մանրածճիներ... : Այս մշուշապատ, անասուգելի, ենթադրութիւններու վրայ հիմնուած տեղեկութիւնն է որ աշխարհի գիտունները իրար անցուցած է: Ի՞նչ շահ կայ Հրատի վրայ կեանք գտնելու մէջ: Ըստ "գիւտարար"ներուն, ատիկա պիտի փաստէ թէ ան կրնայ որեւէ տեղ *իւժնիրեն* ծագում առնել: Ուրեմն Աստուծոյ միջամտութիւնը աւելորդ է, և Աստուած գոյութիւն չունի... :

ԺԹ. Դարուն դիցաբանութիւնը կը մեռնի և գիտութեան առջեւ կը բացուի միջոցին անհունութիւնը: Բասգալ կը կոչէ. *«Այս անհունն միջոցներու ն յաւերժական լուծիւնը զիս կ'ահաբեկէ»:* Գիտութեան

պարզեաժ քարիքներու հետ միատեղ կը տեսնենք նաեւ **բնութեան չարաշահումը**, մթնոլորտի ապակեանումը, նոր սերունդին մէջ տիրող սանձարձակ կեանքի ձեւերը, ընտանիքներու քայքայումը, մեծերու հանդէպ յարգանքի պակասը և տխուր ու մտահոգիչ վիճակներ:

Գիտութիւնը որպէս **դրակա՛ն** յատկանիշ, թէ՛ փափաքելի է և թէ՛ մաղթելի: Մեր Տէրը Յիսուս Զրիստոս ըսաւ.

«Վա՛յ ձեզի, Օրէնքի՛ ուսուցիչներ, որ գիտութեան դրան բանալին կը պահէք. դուք չէք մտներ և կ'արգիլէք տնոնց՝ որ կ'ուզեն մտնել» -- Դուկ. ԺԱ. 52:

Ի՞նչ կը նշանակէ գիտութիւն: Գիտութիւնը, բնութեան, հասարակութեան և մտածողութեան զարգացման մէջ եղած օրինաչափութեան և մեզ շրջապատող աշխարհի վրայ ծրագրուած կերպով ազդելու գիտելիքներու սիրովն է: Գիտակցութեան գործունէութիւնն է, որու կեդրոնական նպատակն է ըմբռնել իրականութիւնը և իմացութիւնը: Մարդ կ'ապրի աշխարհի մը մէջ ուր ոչ միայն գոյ է աչքով տեսանելի նիւթը, այլ նաեւ բարոյական ու հոգեկան իրողութիւններ, (սէր, պատիւ, ճշմարիտն և սուտը, բարին և չարը, կեղծն ու իրականը) որոնք տեսանելիէն ու շօշափելիէն անդին են ու անմերձեանալի, այսինքն հանդերձեալը: Անցեալը գիտենք, ներկային ականատես ենք, բայց հանդերձեալը՝ գալիքը մութ է մեզ համար:

Ներկայ գիտութիւնը և գիտութեան բուրմերուն արտայայտութիւնները կը պատկանին ու կը պատկերեն միայն **ջօշափելին** ու աչքով **տեսանելին**: Երկնառաք Յիսուս՝ «Մարդեղեալ Աստուածածին»ը յայտնաբանեց մարդկութեան ա՛յն ինչ որ նիւթի գիտութիւնէն **անդի՛ն** է ու յաւերժական իրականութիւն: Պօղոս Առաքեալ իր բանաստեղծութեամբ կը վստմացնէ **ՍԷՐԸ** բարոյական ու անդեմական գիտութենէն:

Ինչո՞ւ, որովհետեւ մարդ ունի կարելիութիւնը ամբարելու գիտութիւնը առանց զայն գործածելու կամ արդիւնաբերելու: Նման այն ծառային որ ստանալով մէկ տաղանդը գնաց ու զայն պահեց հողին տակ առանց արդիւնաւորելու կամ պտղաբերելու: Մարդ չի կրնար ամբարել սէր կամ սիրել անձ մը առանց արտայայտելու իր սէրը, որ սիրոյ կը վերածուի, **փոխադարձօրէ՛ն սիրուելով**: Տալն ու սրուիլը սիրոյ արտայայտութիւններ են: Հնարաւոր չէ մէկու մը համար աճիլ բարոյապէս և հոգեւորապէս՝ առանց տալու շնորհին: Մեր աճումին չափանիշը՝ մեր սիրելուն և տալո՛ւն մէջ կը կայանայ:

«Նոյնիսկ լեռները տեղափոխելու չափ զօրաւոր հաւատք ունենամ, բայց սէր չուսնենամ, ոչինչ կ'արժեմ»:

Ի՞նչ է հաւատքը:

Վերլուծութեան և «քանականութեան» օրէնքներու չենթարկուող ամենամեծ երեւոյթներէն մէկը **հաւատալն** է, հաւատալ Աստուծոյ գոյութեան և Անոր Հայրութեան: Զրիստոնեայի մը դերը՝ *հաւատալ, տառապիչ և սպասել է*: Հաւատալ՝ խորհուրդի մը տիրացումն է որուն ստուգութեան փորձանիշը ինքն իր մէջն է: Ստուգութեան անդիմադրելի գագացումն է որ խանդավառ կը դարձնէ քրիստոնեան:

Ազգութենէ, լեզուէ և ցեղային պատկանելիութենէ գերիվեր և հասարակական է աներկեւան հաւատքը, որ յայտնուեցաւ Մարդեղեալ Զրիստոսով: Գաղափարական այս հաւատքը ամէն Հայու մօտ հաւասար ուժգնութիւնը չունի և, հաւասար գօրութեամբ չ'արտայայտուիր. որովհետեւ, ամէն հայ մարդ, միեւնոյն չափով հաւատքի ուժին հասողութիւնը չունի: Մարդ էակը շեղած է իր կոչումէն, սիրոյ գաղափարականը զոհելով առարկայականին: «Ես»ի և փառամոլութեան հակադրութիւնը՝ հաւատքի՝ աշխարհն է, գաղափարականի և բարոյական գեղեցկութեան աշխարհը:

Մեքենական աշխարհահայեացք ունեցողներու համար, հաւատքը գառանցանք է մինչ հաւատաւորի համար՝ կեանք է, գօրութիւն և փրկութիւն, որուն առջեւ գիտութիւնը կը խոնարհի և փիլիսոփայութիւնը կը լռէ: Զրիստոսի կեանքի բանալին եւս հաւատք և սէր էր դէպի Աստուած: Հաւատքը արտայայտելու կերպը և զայն բացատրելու եղանակը պարտի ըլլալ սիրո՛յ աղբիւրէն: Այն մարդը, որ տիեզերական հրաշալոյս գեղեցկութիւններուն մէջ չի տեսներ Արարիչը, անոր մէջ կը պակսի ոչ թէ հաւատքը, այլ **ՍԷՐԸ**:

Հաւատքը մարդուն մէջ աստուածային սիրոյ պատկերին վերակենդանացումն է, որովհետեւ սէրը կը հերոսանայ, հաւատքը կը սրբանայ, զոհողութիւնը կը դիւցազնանայ: Անառակ Որդին, իր հօրը սիրոյն վրայ ունեցած հաւա՛տքն էր, որ զինքը կը տանէր քաջ առ քաջ դէպի տուն: Յիսուս Զրիստոսի կեանքն ու գործունէութիւնը ակաթեմական հարց մը ըլլալու չէ՛, այլ հաւատքի, սիրոյ և յօժարելու խնդիր մը: Լուսինէ Զաքարեան, շնորհիւ իր ջերմեռանդ հաւատքին և սիրոյն, եկեղեցական երաժշտութիւնը բեմ փոխադրեց:

Մովսէս Խորենացին կը վկայէ թէ. «Մեսրոպ Մաշտոց հրեշտակի տեսք ունէր, բեղմնաւոր միտք, պայծառ էր խօսքով, գործերով ժուժկալ մարմնով փառահեղ, սովորութիւններով աննման, խորհրդակցութեամբ մեծ, հաւատքով ուրիշ, յոյսով համբերող, սիրով անկեղծ, ուսուցանելիս անձանձրոյթ»: Մեծ գործեր արդիւնաբերողներու **հաւատքն ու սէրը** միջոտ միատեղ քալած են: Հաւատալ կը նշանակէ նոյնանալ թէ հաւատացածին և թէ բոլոր հաւատացեալներուն հետ. որոնք կը հաւատան քու հաւատացածիդ՝ Աստուծոյ: Եթէ կը հաւատանք Աստուծոյ, պարտական ենք վստահիլ ու սիրել նաեւ անո՛նց որոնք կը հաւատան: Յովհաննու Աւետարանին մէջ արտեալը կը շեշտէ՝ **'հաւատալ'ը** աւելի քան "հաւատքը", որովհետեւ *«հաւատքը»* կրնայ

միայն "գիտութիւն" մը ըլլալ, իսկ **"հաւատալը"** գործօն արարժ մըն է: Հաւատալու առաջին նշանը աղօթելն է: Հաւատալու գորոյթը, ո՛չ թէ *հաւատի* մէջն է, այլ **չհաւատալո՛ւ** ազատութիւնը ունենալով հանդերձ, **հաւատալո՛ւն** մէջն է:

Յիսուսի հմայագեղ առակները պատկերացումներն են Իր հայրենի հողին և բնութեան համակրութեան: Ան դիտեց և ուշադրութիւն դարձուց աղբատին ու հարուստին, Հրեային ու հեթանոսին որոնք քաղեցին Հրեաստանի ճամբաները: Հայ ժողովուրդը հաւատարմօրէն համախմբուած մնաց իր եկեղեցիին շուրջ և անխախտօրէն կապուած՝ Իր հաւատին:

Քրիստոնեան՝ տառապանք տեսած, երազներ կորսնցուցած, կարօտի և սիրոյ հուրերով այրուած հաւատացեալ մըն է: Հաւատալ ու սիրել այն զոյգ ճառագայթարձակ ջողերն են, որոնք կը սրբացնեն մարդը և տեսանելի կը դարձնեն Անտեսանելին: Աստուծոյ վսեմ ներկայութիւնն ու անգերազանցելի սրբութիւնը կ'արտացոլայ Յիսուս Քրիստոսի անձնագոհի սիրոյն մէջ ու կ'ակնկալուի իւրաքանչիւր հաւատացեալէ: Յիսուս Քրիստոսի մահը *փրկարար* մահ մը դարձաւ, Հօր Աստուծոյ **սիրոյն** համար:

Հաւատացեալները կը դիմակալեն անյաղթահարելի դժուարութիւնները, կը յաղթահարեն հազարաւոր խոչընդոտներ, կը ծաղրուին, կը վտարուին, կը սպաննուին ու սակայն կը շարունակեն հաւատարիմ մնալ իրենց Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որովհետեւ իրենց հաւատին զուգահեռ մշակած են աստուածահաղորդ սէրը:

«Ի՞նչ օգուտ, եթէ բոլոր ինչքերս աղբատներուն տամ և նոյնիսկ մարմինս կրակի մատնեմ. եթէ սէր չունիմ՝ ոչինչով կ'օգտուիմ:

Ի՞նչպէս կարելի է, որ հաւատացեալ մը իր բոլոր ինչքերը աղբատներուն բաժնէ և նոյնիսկ նահատակուի, ու այս բոլոր զոհողութիւնները ոչինչ սեպուին: Պէտք է մտնալ, որ Քրիստոսի հաւատալը, Մարդեղեալին Աստուածայայտնութիւնը, հեթանոս կրօնի տեսութիւն և վարդապետութիւն մը չէ: Քրիստոսի հաւատալ, Անոր աջակերտիլ **սրբարար ապրումի** ճանապարհ մըն է, ու ո՛չ միայն *դաւանակա՛ն* հաւատալիք մը: Յիսուսի աջակերտելու պայմանը. *«Եթէ մէկը կ'ուզէ Իմ ետեւէս գալ՝ թող ուրանայ իր անձը, թող իր խաչը առնէ և իմ ետեւէս գայ. որովհետեւ ով որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն. իսկ ով որ կորսնցնէ իր անձը և ետարանիս համար՝ պիտի փրկէ զայն»*--**Մարկոս Ը.35, Է.13:**

Քրիստոնէութեան մէջ ամենադժուար իրագործումը, ո՛չ բոլոր ունեցածը աղբատներուն բաժնելն է, ու ո՛չ ալ նահատակութիւնը, այլ՝ **անձը ուրանալ** է: Մարդ արարած կրնայ հրաժարիլ իր ստացուածքէն ու նոյնիսկ իր մարմինէն բայց շատ դժուար է հրաժարիլ **ԻՐ ԱՆՃԷՆ**: Անձը իրաւ

գոյութիւն ունեցող ենթական է, այսինքն հակադիրը ոչնչութեան: Անձի մը անձեռնմխելիութեան իրաւունքը կը ստեղծէ անոր անհատականութիւնը և իսկութիւնը: Զրիստոսի աշակերտիլ կը նշանակէ «ես»էն հրաժարիլ և ամբողջականօրէն նուիրուիլ Աստուծոյ: Անձին "ես"ը՝ հոգին, սիեզերփի աննիւթական ենթանիւթն է: Մոռնալ իր անձը՝ իր պահանջներով, և աշխարհը իր բոլոր հեշտանքներով, աշակերտիլ է Յիսուսի: Յիսուս Իր **անձին և ապրումին** միջոցաւ ցոյց տուաւ Աստուծոյ սիրոյ Դիմագիծը:

Յիսուս Զրիստոս Իր աշակերտները ճգնաւորութեան չհրաւիրեց, որովհետեւ Անոր մէջ աղփատութեան սերը ճգնաւորական ցուցամոլութեան ամբարտաւան զգեստ մը չէր: Հինգերորդ Դարը թէեւ մտաւորական մոլորութեան դէմ պայքարողներու Դարն էր ճգնաւորական հանգամանքով, սակայն ճգնաւորութեան մէջ եւս ի յայտ եկաւ *խոնարհութեան հպարտութիւնը...* :

Ճգնաւորները պայքարեցան երեւոյթապէս հաւատացեալ ազգին անհաւատութեան դէմ, և երեւոյթապէս բարոյական ազգին անբարոյութեան դէմ, գիրով, գիրքով, խօսքով, գործով, գրականութեամբ, Աստուածաշունչով, Բարոզութեամբ, ճգնութեամբ, հալածուելով, բայց չկրցան *փառասիրութեան* փորձութենէն ազատուիլ: Աստուծոյ ուզածը, ո՛չ թէ մեր աշխարհէ բաժնուիլն է, այլ Անոր ծառայե՛լ է նման **Աննա մարգարէուհիի--Ղուկ. Բ.25-36:** Տիրամայրը Բաշաբար կեանքը ընդգրկող մէկն էր և ոչ թէ կեանքէ փախուստ տուող մը:

Արբացումով նիւթականը՝ հոգեւորին, հունաւորը՝ անհունին, և ժամանակաւորը՝ Անժամանցելիին հաղորդակից կը դառնան: Յիսուս՝ Իր սրբութեան ոգեշնչեց առաքեալները: Հոգեկան լոյսն է, որ Մագդաղենացին իր աղտոտ կեանքէն բարձրացուց անբասիր սրբութեան: Աղօթփի և սրբութեան գօրութիւնով բիրտ Բարը կը խոնարհի ու կը դառնայ խաչաբար: Սատանան որումի հատիկներ կը նետէ մեր մտածումներուն մէջ արգելք ըլլալու համար մեր սրբութեան և ուղղամտութեան: Ճգնակեցութեամբ չենք կրնար փախչիլ փորձութենէն:

Ըստ Ա. Գրիգոր Տաթեւացիի. «Մրտի սրբութիւնը այն է, որով սիրտը կը մաքրուի և կը պայծառանայ կարենալ տեսնելու և ջերմեռանդօրէն սիրելու համար զԱստուած»: Անոնք են սուրբ, որոնք ապրելով հանդերձ աշխարհին մէջ, կը մնան աշխարհէն վեր: Ճշմարտութիւն, սեր և սրբութիւն պիտի կարենան պահել Եկեղեցին հաստատուն: Սրբութիւնը Աստուծոյ ներկայութիւնն է անձի մը հոգիին մէջ. Աստուծոյ ջնորհքը, լոյսը, մտերմութիւնը, Անոր կամփին գործադրութիւնը ամէն գնով, միշտ ու ամէն տեղ: Որոնց կեանքի նպատակն է՝ **Եկեղեցի Արժայութիւն Ըն:**

Սրբութիւնը գաղափար, յորդոր ու օրէնքի ամբողջութիւն ըլլալէ աւելի կեա՛նք և վա՛րք է: Սրբութիւնը կ'իրագործուի կեանքով ու այդ կեանքին ճառագայթը եղող **ծառայութեամբ:** Սրբութիւնը ապրող մարդը իր

նիւթեղէն, հողեղէն եւ թենէն կը վերածնի հոգեղենի, բարձրացնելով զայն առ Աստուած աղօթքով ու անձնուրացութեամբ: Աստուծոյ սրբութիւնը այն անթափանցելի տարածքն է, որ նարեկացին կը կոչէ *անտերձենայի*: Աստուծոյ վսեմ ներկայութիւնն ու անգերազանցելի սրբութիւնը կ'արտացոլայ Յիսուս Բրիստոսի մէջ ու կ'ակնկալուի իւրաքանչիւր հաւատացեալէ:

Պօղոս առաքեալ իր "ես"ը կը նմանցնէ խղճալի անյոյս անձնաւորութեան մը որ կը գոչէ, ըսելով. *Տ՛ղջ խղճալի մարդ եմ: Ո՞վ զիս պիտի փրկէ մահուան դատապարտութեամբ այս մարմինէն* -- Հռոմ. Է.24: Միայն *սրբութիւնն* է որ կրնայ ազատել մարդը իր անկումէն:

«Մէր ունեցողը համբերատար կ'ըլլայ և քաղցրաբարոյ»:

Համբերել, երկայնամիտ ըլլալ է, լուռ մնալ մանաւանդ վա՛տ արարքի մը նկատմամբ: Ներողամտաբար վերաբերուիլ, թոյլ տալ: Համբերատար ըլլալ ոյժ կը պահանջէ չարիք մը կրելու, դիմանալու և տոկալու: Տոկալու այդ զօրոյթը կու գայ մի միայն Սիրոյ ակնադիւրէն՝ Աստուծմէ:

Բրիստոնեան ինչո՞ւ համբերատար ըլլալու է: Յիսուսի աջակերտողը ցոլացումն է իր Վարդապետին: Բոլոր հաւատացեալ Բրիստոնեաներ կը պատկերեն իրենց Տէրը Յիսուս Բրիստոս: Բայց դժբախտաբար սխալ կը ներկայացնեն իրենց Տէրը յաջս աշխարհի:

Հաւատացեալ Բրիստոնեայ հայրապետներ անճիշտ ներկայացուցին իրենց Տէրն ու Փրկիչը գրեթէ բոլոր Տիեզերական Ժողովներու մէջ, զրպարտելով ու նախանձելով իրենց հակառակորդներուն, ու նզովելով զանոնք: Պօղոս առաքեալ նախատեսելով, որ մարդկային կիրքերու զոհ կրնան երթալ ապագայի եկեղեցականները, զանոնք կը զգուշացնէ անտեղի դատաստաններ տեսնելէ ու անսէր վճիռներ արձակելէ:

Անհերքելի պատմական իրողութիւնն է, որ Նիկիոյ Տիեզերական Ժողովէն յետոյ, Բրիստոսի եկեղեցին փոխանակ աշխարհածաւալ դառնալու, սկսաւ դանդաղիլ ու կասիլ: Իւրաքանչիւր Տիեզերական Ժողով, փոխանակ *խթա՛ն* մը ըլլալու, եղաւ հարուած մը ու պատուհաս եկեղեցոյ յառաջացման:

Միաբնակ և երկաբնակ վարդապետութեան համար, Բիւզանդիոն անտարբեր մնաց և իր օգնութիւնը զլացաւ Վարդանանցի ճակատամարտին 451-ին: Նոյնը պատահեցաւ նաեւ Մանազկերտի մօտ Տողոտափ վայրին, Օգոստոս 19-ին: Բիւզանդիոն ԺԱ Դարուն, աստիճանաբար ոչնչացնելով հայկական պետական միաւորումները (Վասպուրականի, Արծրունյաց Ճիրակի ու Վանանդի Բագրատունեաց Թագաւորութիւնները), լուծարքի ենթարկեց հայկական ռազմական ուժերը, որով հայ բանակը անկարող դարձաւ ներխուժող Սելջուկ-թրքական հորդանանները վտարել Հայաստանէն ու պարտուեցաւ: Նոյն պատճառաւ, Բիւզանդիոն կորսնցուց նաեւ Եգիպտոսը

արաբական բանակին դէմ: Եգիպտոսի անկումը պատճառ եղաւ որ հիւսիսային Աֆրիկէի բոլոր երկիրներն ու ժողովուրդը Իսլամանան:

Միրով, համբերութեամբ ու քաղցրալիք խօսակցութեամբ շատ անլի օգտակար գործադրումներ կարելի էր կատարել, քան թէ Տիեզերական Ժողովներու *նշովնով ու քանադրանով*: Եկեղեցին կը գտնուի այսօր ալ նոյնանման ընտրանքներու սեմին: Ականջ տանք առաքեալին խօսքերուն որ կը զանգէ անդադար, ըսելով.

«Աէր ու նեցողը համբերատար կ'ըլլայ և քաղցրաբարոյ».

Մէրն ու յարգանքը, համբերութիւնը, փոխադարձ զիջումներն ու հանդուրժողութիւնները կը ստեղծեն անդորր ու յաղթարջաւ եկեղեցի ուր մարդիկ փոխանակ գայթակղելու կը դառնան դէպի հաւատքի և յոյսի Օճախը:

**«Աէր ու նեցողը չի նախանձիր,
չի գոռոզանար, չի հպարտանար»...**

Վերոյիշեալ պատուէրը տրուած է թէ՛ անհատներու և թէ՛ եկեղեցիներու: Ո՛չ թէ քարէ կառոյցներուն, այլ վարչութիւններուն:

Ի՞նչ է նախանձը:

Նախանձը տիրութիւն, սրտնեղութիւն, չար զգացում է, որ մարդիկ կ'ունենան տեսնելով ուրիշի մը յաջողութիւնը կամ բախտաւորութիւնը, որմէ ինք զուրկ է: «Ուր որ կայ հակառակութիւն և նախանձ՝ այնտեղ կայ անկարգութիւն և ամէն չար բան: Մինչդեռ երկնային իմաստութիւնը ու նեցող մարդը նախ մաքուր կ'ըլլայ, ապա նաեւ՝ խաղաղարար, ազնիւ, բարեացակամ, ողորմած և բարի գործերով արդիւնաւոր, անկողմնակալ և անկեղծ: Իսկ իր շուրջ խաղաղութիւն սերմանողը՝ արդարութիւն կը հնձէ»--Յակ. Գ.16-18:

Նախանձ, փառասիրութիւն, եսամոլութիւն և հպարտութիւն՝ մարդը վայրագ գազան կը դարձնեն: «Փափափիլը չէ արգիլուած:

1. Փափափ ունենալու ենք՝ ***տորվելու և նկարագիր կերտելու***:

2. Այս փափափը հայերս կը կոչենք *«Բարի նախանձ»*: Հաւատացեալը

Նախանձախնդիր կերպով տէր կանգնելու է իր հաւատքին ու սրբութեան:

Ո՞ր է հայ հաւատացեալին նախանձախնդրութիւնը իր Մայր Եկեղեցիին հանդէպ:

Նախանձը կայենէն ծնունդ առած՝ դժուար է մարդկութենէն արմատախիլ ընել: Նախանձը կրակէ կաթիլ է: Նախանձը կրնայ դժոխքը փոխադրել մարդոց սրտերէն ներս: Անգլիական գրականութեան տիտան Ճէֆսայիր նախանձը կը պատկերացնէ որպէս *«կանայ աչքով հրէջ մը, որ հեգնանքով կը դիտէ»*: Օթելլօի ողբերգութեան առանցքը, կը կազմէ Օթելլօի նախանձը: Ղազար Փարպեցիի ստացած արտաբոյ կարգի ժողովրդա-

կանութիւնը, հակառակ եղող արեղաներու նախանձը շարժեց ու զայն վարկաբեկելու համար ամէն ջանք բանեցուցին: 1. հաւատն ու բարոյականը խժբժեցին: 2. "Աղանդաւոր" անուն փակցուցին:

Արեւելեան եկեղեցիներու՝ Բիւզանդիոնի, Անտիոքի, Արեմասանդրիայի, Երուսաղէմի գծաութիւնը և իրարու միջեւ եղած պառակտումն ու նախանձը, Հռոմի եկեղեցին, ակամայ, դարձուցած էին հաշտարարի դերը խաղալու: Այս հաշտարարի դերը ի վերջոյ Հռոմի եկեղեցին դարձուց մեծաւոր եպիսկոպոս:

Նախանձը կը ծնի ու հասակ կ'առնէ մարդուն հետ: Ան բնագոյ մըն է արմատացած մարդուն մէջ և կարելի չէ արմատախլել. բայց հնարաւոր է զայն փոխակերպել և վերածել բարեաց աղբիւրի՝ «դարձնելով *բարի նախանձ և ազնիւ մրցակցութիւն*»: Նախանձի պարագային, ենթական իր անձը, իր ետը, կ'ուզէ գոհացնել, փայփայել, ջոյել՝ գործածելով, կործանելով, փճացնելով իր դիմացիներ: Նախանձող ու ցանկատէր մարդը ինք իր թշնամին է և ինքը իր ձեռքով կը կործանէ ինքնզինք: Նախանձը, Բրիտանական հասկացողութեամբ, մեղք է:

«Անոնք որոնք Զրիստոսի կը պատկանին՝ իրենց մարդկային կիրքերն ցանկութիւնները խաչին վրայ մահացուցին» -- **Գող. Ե.24**: Յիսուս տիրական ու իշխանական հեղինակութեամբ բացատրեց որ հարստութիւնը կրնայ մրցորդ և նախանձորդ դառնալ Աստուծոյ:

Ի՞նչ դեր կը խաղայ *հպարտութիւնը*:

Առանց հաւատի և հոգիի լոյսին, մտի լոյսը սէգ ու հպարտ, ամբարտաւան, պատուհաս ու անէծք է աշխարհի: Արուեստը կեանքէն կու գայ, կրկնելով անոր բոլոր ծփանքներն ու երանգաւորումները: Տեւողութեան մշտանորոգ պաստառին վրայ կը գծուին, կը մաշին, կը պատռին, իբրեւ փոշի հովին կ'անցնին բոլոր հպարտ, կոկոզավիզ, փարթամ ճաշակները: Ազգեր կան, որ կը հպարտանան պատերազմներ ընելով: Մենք հայերս հպարտանք կը զգանք մեր ըրած հոգեկա՛ն նուաճումներով: Հոգեկան մեծ "աֆդ" մը կատարեցինք թարգմանելով Աստուածաշունչը, որ հաւաքածոյ մըն է մարդկային բարբերու և աստուածային խորհուրդներու:

«Իո՛ւք հայերդ հաւաքուած էք այսօր ձեր մեծ դարադարձը տօնելու համար, գիտե՞ք թէ որքան իրաւունք ունիք հպարտ ըլլալու: Ուրիշ ժողովուրդներ ալ տօներ ունին, բայց անոնք կը տօնեն աւելի իրենց յաղթանակները ուրիշ ազգերու վրայ, իրենց գէնքի յաջողութիւնները, պատերազմներուն փառքը: Այո՛, ժողովուրդներ կան որ բունութեան յաղթանակը պաշտամունք ըրած են իրենց: Բայց ի՞նչ գեղեցիկ է երբ ձերինին նման հին և մեծ ժողովուրդ մը ոչ թէ կը մտածէ իր մղած պատերազմները տօնել կամ իր կրած տառապանքները, այլ կը տօնէ իր հոգեկան նուաճումները: Աստուածաշունչի ձեր թարգմանութիւնը, ասկէ 15 դար առաջ, մէկն է ամէնէն մեծ հոգեկան յաղթանակներէն՝ զորս երբեւիցէ

ժողովուրդ մը կրնայ տարած ըլլալ պատմութեան մէջ»--**Փրօֆ. Ն. Եօրկա:**

«Գիտութիւնը կը հպարտացնէ, մինչ սերը հաւատքը կ'ամրապնդէ» --Ա. Կորնթ. Ը.1:

«Ով որ ինքզինք կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, և ով որ ինքզինք խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»--Ղուկ. ԺԴ.11:

Խոնարհութիւնը քրիստոնէական այն չֆնաղ առաքինութիւնն է, որով անհատ մը իր անձին գիտակցութիւնը և սահմանումը ունի:

1. Ան կը գիտակցի թէ ի՞նչ որ ունի, ի՞նչ որ է, Արարչին տուրֆն է, Աստուծոյ շնորհքը:
2. Խոնարհութիւնը շփոթելու չէ նուաստութեան հետ, ցածութեան կամ վախկոտութեան հետ:
3. Զաջութիւնն ալ քրիստոնէական առաքինութիւն մըն է, հոգիի ճշմարիտ և արդարադատ արիութիւնը:
4. Արիութիւն՝ ստութեան դէմ, Բաջութիւն՝ սատանայի և մեղքին դէմ:
5. Արիութիւն՝ տկարներու և հալածուածներու պաշտպանութեան համար:

Խոնարհը ի՞նչ անոյ՞, ի՞նչ գրաւիչ դէմք մը, համեստութեան ի՞նչ հրապոյր մը ունի զինք կը սիրես, իր ներկայութենէն կ'ախորժիս ու հոգիդ կը ներշնչուի:

1. Արդարեւ հեզերը, խոնարհներն են որ պիտի տիրեն երկրին, որ պիտի ժառանգեն զայն, ու իշխեն մարդոց սրտերուն:
2. Աստուած կը սիրէ խոնարհ հոգիները, Աստուած կը սիրէ մեղաւոր հոգիները որոնք սրբուիլ կ'ուզեն, որոնք խոնարհիլ գիտեն իր սրբութեան առջեւ (Փարիսեցին ու Մաֆսաւորը) որոնք տաճար գացին աղօթելու:
3. Հոգեւոյս Եղիշէ Պատրիարք Դուրեան. համեստութեան և խոնարհութեան սրբափայլ տիպար մըն էր:
4. Տէրը լուաց Իր ծառաներուն ոտները, ամենէն նուաստ ծառայութիւնը: Գործը աւելի ազդեցիկ է, քան թէ խօսքը:

Քրիստոնէութիւնը հիմնուած է հեզութեան, խոնարհութեան, ծառայութեան, զոհաբերութեան, արդարութեան, սիրոյ և ճշմարտութեան վրայ: «Թող ձեր հեզութիւնը յայտնի ըլլայ մարդոց»--Փիլպ. Դ. Քրիստոս կը յաղթահարէ Սիոնի (Եկեղեցիին) *հպարտութիւնը* ո՛չ խորամանկութեամբ և ոչ ալ վայրագութեամբ, այլ *խոնարհութեամբ*, հեծած իշու մը վրայ ու փառաբանուելով մանուկներէ և պարզունակ ժողովուրդին կողմէ:

1. Ամբարտաւանութիւնը իր հետ կ'ունենայ նաեւ ցուցամոլութիւն, կեղծաւորութիւն, արհամարհանք և ծաղրանք հանդէպ ուրիշին

Մեր Փրիչը խոնարհութեան Աստուած է, խոնարհ հոգիներուն Աստուածն է, որ կ'ըսէ.

«Իմ լուծս ձեր վրայ առէք և սորվեցէ՛ք ինձմէ, հեզ եմ և սրտով խոնարհ... Իմ լուծս բաղցր է և իմ բեռս թեթեւ»-Մատթ. ԺԱ.29:

Քրիստոս կը յաղթահարէ Եկեղեցիներու *հպարտութիւնը*
Ծաղկազարդի օրը, ո՛չ խորամանկութեամբ և ոչ ալ վայրագութեամբ, այլ *խոնարհութեամբ*: Բեծած իջու մը վրայ ու փառաբանուելով մանուկներէ և պարզունակ ժողովուրդին կողմէ:

**Մերը անպատշաճ վարմունք չ'ունենար,
միայն ինքզինք չի մտածեր,**

Հաւատացեալ քրիստոնեայի մը անվայել է ունենալ անպատշաճ և տմարդի վերաբերմունքներ: Իր բերնէն ոչ մէկ անվայել խօսք կամ կանացի պատիւը վիրաւորող կատակ լսուելու է: Պօղոս առաքեալ կը պատուիրէ ըսելով. *«Ինչ որ կ'ընէ՛ք՝ թող վայելուց ու կարգ կանոնով ըլլայ»* --Ա. Կոր. ԺԴ.39: Վայելչութիւն պէտք է պահել ինչպէս ուրախութեան, նոյնպէս և վիշտի մէջ: Առանց պատասխանատուութեան պարտականութեան՝ իրաւունք չկայ և առանց աշխատութեան՝ վարձատրութիւն չկայ, առանց ճիգի՝ հոգեկան վայելք չի կրնար ըլլալ: Հաւատացեալ մը կը մտնէ Քրիստոսի ամենամտերիմ և էական հաղորդակցութեան մէջ և հոն կը մնայ, կ'ամրանայ ու կը սորվի հոգեկան վայելչութիւններ ու ջնորհներ:

«ԵԱ»ը կը յարատեւ որքան տեսն որ իր Գերադասին փառաց կը սպասաւորէ: «Ես»ը մարդ էակին բարոյական նախասիրութիւնն է: Երեւոյթին ետին թափաքող Աներեւոյթը ա՛յնքան գրաւած էր թարգմանիչները, որ անոնք *մոռցան իրենց անձերը*, և ընկղմեցին իրենց անհատականութիւնը այդ Ձօրութեան հոսանքին մէջ:

Յիսուսի աջակերտող մը *«Միայն ինքզինք չի մտածեր»*, այլ նախ ուրիշներու կ'ուզէ օգտակար ըլլալ: Նիւթապաշտ «Ես»ի մարդ արարածը՝ հոգեւոր սնանկութիւն մըն է:

Չօրդ Դարուն, Աստուածաշունչի լեզուն փոխուած է արդի հոգեբանութեան լեզուին:

1. Փոխանակ Յիսուսի անձնուրացութեան պատուէրին, աւետարանական բարոյիչները կ'անսան հոգեբաններուն խորհուրդին:
2. Փոխանակ ժուժկալութեան, ուշադիր են անձին արողջապահութեան:
3. Մեր Դարը մարդկային "ես"ին պաշտամունքի դարը դարձած է: "Ես"ին գոհացման դարն է:

4. "Ես"ի բազմինին դարն է, մանաւանդ "իմ" հանգստութեան աստուծոյս դարը, ի՛մ "յաջողութեանս" դարը, ի՛մ յաղթանակիս դարը:

Ձկայ բարոյական փլուզում մը ա՛յնքան ակտիւ, որքան՝ երբ մարդ կը հաստատէ նուիրատուին զոհաբերութեան մէջ իր եսական տրամադրութիւնը: Հակառակ մարդկային ազնիւ գաղափարախօսութիւններու, մենք կ'ապրինք այնպիսի երկրի մը մէջ, ուր նիւթապաշտութիւնը, դրամապաշտութիւնը, աւելին, ա՛լ աւելին ունենալու տենչանքը կը հասնին իրենց գազաթնակէտին: Կը ստեղծուին պայմաններ անձը դարձնելու ինքնակեդրոն, եսաւեր, այլամերժ, ընդունելու այն վիճակը զորս ուրիշներ կանխաւ վճռած են, առանց իր հաւանութեան: Կ'ուրանայ իր մարդկութիւնը ու անզգալաբար կ'ընտրէ դառնալ մեքենայ:

Եսասիրութիւն ցանեցի՛ք ու ահա առանձնութիւն պիտի հնձ՛էք:

Շահասիրութիւն ցանեցի՛ք և ահա զրկանք պիտի հնձ՛էք:

Խռովութիւն և կռիւ՝ և ահա կրակ պիտի հնձ՛էք:

Եսասիրութեամբ մարդ կը մեկուսանայ ընկերութենէն և կ'անջատուի Աստուծմէ:

«Բարկութեամբ չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անիրաւութեան վրայ չ'ուրախանար»

Մալգոմ էֆս (ամերիկացի սեւամորթ իսլամներու բարոզիչը) դպաւ թելի մը որ արձագանգեց բարկութիւն, վրէժ և գազանային բրտութիւն: Մարթին Լուտեր Բինկ դպաւ թելի մը, որ արձագանգեց սէր և ներդաշնակութիւն ճերմակներու և սեւերու միջեւ:

Քրիստոսի, տաճարին մէջ դրամափոխներու սեղանները տապալելուն մէջ պարտ ենք տեսնել տարբերութիւնը բարկութեան մը *ուժգ նութիւ նը* և բարկութեան *վայրագութիւ նը*: Քրիստոնեաները դժուարութիւն ունին բարկութեան հետ առնչուելու, որովհետեւ բարկութիւնը միշտ բացասական նկատուած է: Բարկութիւնը էթէ մէջդ մ'նայ որպէս քինախնդրութիւն, ժամանակ մը յետոյ կը դառնայ *անձ նակործաւ*: Հետեւաբար արդար բարկութիւնը կրնայ ըլլալ նաեւ ջինարար: Արդար բարկութիւն մը կրնայ դէմ կանգնիլ բռնատիրութեան:

Ձկայ թջնամի մը որ այնքան սպառնայ մարդուս մտքին, որքան բարկութիւնը: Մաստիկ բարկութիւնը կը մթագնէ միտքն ու տեսողութիւնը: "Ձայրոյթը կարճատես խենթութիւն է" կը գրէ Հոռմայեցի Ռբատիոս Ֆլակկաս: Աստուծոյ երկի՛ւղը միայն կը սանձէ մարդոց կիրքերը հեռու կը պահէ զանոնք մեղանջելէ: *«Աստուծմէ չվայսցորէն վայսցիր»*, ըսուած է իրաւամբ:

«Զարութիւն չի խորհիր».

Զարը և ապականութիւնը անարգել կը գործեն և նուաճումներ կ'արձանագրեն: Ինչո՞ւ, որովհետեւ Յիսուս ըսաւ. *«Զգեցէ՛ք որ երկրւո՛ւն ալ (ցորենն ու որովը) միասին անին մինչեւ հու նձձի ժամանակ, որպէսզի չըլլայ թէ որովը բաղած ատեն ցորենն ալ միասին արմատախիլ ընէ՛ք»*. --Մատթ. ԺԳ.30:

Համաշխարհի եկեղեցիներ իրենց Տիեզերական ժողովներու ընթացքին աննկատ թողուցին իրենց Տիրոջ՝ Յիսուսի վերոյիջեալ պատուերը, որ էր՝ *«Ի՛նչ, մի՛ բաղէ՛ք որովը, որպէսզի չըլլայ թէ որովը բաղած ատեն ցորենն ալ միասին արմատախիլ ընէ՛ք»*: Ի՛նչ մեծ դժբախտութիւն էր տեսնել բազմաթիւ ցորեններ, որոնք որպէս հերետիկոս դատապարտուեցան և ախտորուեցան, ու բազմաթիւ խոտոր և հեթանոս վարդապետութիւններ, որպէս ուղիղ դաւանանք ընդունուեցան եկեղեցիներէն ներս:

Իմ սահմանումէս և իրաւունքէս վեր է ճշդել ու դատաստան տեսնել Տիեզերական ժողովներու սխալները: Դատելը կը պատկանի եկեղեցւոյ Գլուխին, որ է Յիսուս Քրիստոս: Անոր պատուերը մեզի՝ Իր եկեղեցիին էր. *«Զգեցէ՛ք որ երկրւո՛ւն ալ միասին անին մինչեւ հու նձձի ժամանակ»*: Ձեմ ուզեր աւելի եւս մեկնաբանել սոյն հատուածը: «Միաբանութիւնը բարի գործերու մայրն է, իսկ անմիաբանութիւնը՝ չար գործերու ծնողը» , կ'ըսէ երկիջէ: Զարամտութիւնն ու *անէ՛ նազան*, շահերը գործ ունենալու չեն եկեղեցական Բննադատութեան մէջ:

Ղիւանագէտներու համար, արդարութիւնը շատ հասարակ բառ մըն է և խորհրդանիշ՝ չարաշահութեան և խաբէութեան: Մամուլը պարտ է պայքարիլ կամայականութեանց, չարաշահութեանց, գեղծումներու և խեղաղիւրումներու դէմ, սակայն ան իր մասնակցութիւնը կը թե՛է ղիւանագէտներու շահին: Արդարութեան ամբողջին հիմերը երբ խախտին, ապօրինութիւնը և չարաշահութիւնը կը դառնան օրէնք: Գիտութեան պարզեւած բարիքներու հետ միատեղ կը տեսնենք նաեւ բնութեան չարաշահումը և մթնոլորտի ապականումը:

Երբեմն այնպէս կը կարծենք, թէ Աստուած անկարող է չարը կամ տառապանքը արգիլել: Միայն հաւա՛տին է, որ կրնայ ըմբռնել և թափանցել ամենակալ Աստուծոյ *ամբողջատիրական* խորհուրդ գօրութեանը: Ինչո՞ւ, «Որովհետեւ Աստուած գթասիրտ է չարերուն և ապերախտներուն հանդէպ»--Ղուկ. 2.36: Մութը՝ պակասութիւնն է լոյսին, չարը՝ բացակայութիւնն է բարիին և ապականութիւնը՝ մաքրութեան ու սրբութեան: Նաւապետ մը չի կրնար փոթորիկը կեցնել, բայց կը նաւարկէ այնպէս, որ նաւը չգարնուի ապառաժներու: Նոյնը իրագործելու է հաւատացեալ մը, որ ինքզինք Յիսուսի աջակերտ կը նկատէ:

Աստուած կ'արտօնէ չարը, որովհետեւ մարդուն չար արարքն իսկ Ան կրնայ բարի գործակից դարձնել: Օրինակ՝

1. Յովսէփ գեղեցիկին իբր գերի վաճառումը, Աստուած փոխակերպեց Յակոբ նահապետը և բոլոր գերդաստանը ապրեցնելու:
2. Մովսէսի գետ նետուիլը պատճառ եղաւ անոր փարաւոնի արհայազուն որդի դառնալուն:
3. Յիսուս Քրիստոսի դատապարտութիւնն ու մահը, ամենակալ Աստուած փոխակերպեց մարդոց փրկագործութեան--Հոով. Ա.28:

Եթէ չես կրնար չարը ձեռնով (նիւթականով) զսպել, սանձելու է զայն խօսքով, իսկ եթէ խօսքով ալ չես կրնար սանձել զայն, մտքիդ մէջէն նուաճէ զայն: *«Զարին գալուստը Մատանային ներգործութեամբ է՝ ամենայն զօրութեամբ, նշաններով, խաբէութեան զօրաւոր գործերով և անիրաւութեան բոլոր պատրանքներով»*--Բ. Թես. Բ.9:

Միրել՝ սրբագործել է չարիքը՝ ներողամտութեամբ:

Կայ չարութիւն, կայ մեղանչում և այլատերում, բայց կայ նաեւ ստեղծագործութիւն և բարձր ոլորտ, և աղօթք, և սրբութիւն, և մաքրութիւն: «Քրիստոսի չարչարակից ըլլալը Աստուծմէ տրուած իսկական շնորհ մըն է»--Ա. Պետ. Ե.12: «Ճանչնալ Քրիստոսը, անոր յարութեան զօրութիւնը, և անոր չարչարանքներուն մասնակից դառնալ»--Փիլիպ. Գ.10: «Երկրի չարչարանքներուն, ճգնաժամերուն մէջ յղացաւ Մաշտոցի համեստ միտքը որ երթայ ասիական սպառնալիքներուն դէմ և յայտարարէ, թէ այդ երկիրը՝ Հայաստան պէտք է ապրի»:

«Անիրաւութեան վրայ չ'ուրախանար, այլ՝ ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան»:

Անիրաւութիւնը, իրաւունքի՝ արդարութեան դէմ գործուած անարդարութիւնն է: Հասարակական կարգը չի կրնար հիմնուիլ անիրաւութեան, սուտի և անարդարութեան վրայ: «Զարին գալուստը Մատանային ներգործութեամբ է՝ ամենայն զօրութեամբ, նշաններով, խաբէութեան զօրաւոր գործերով և անիրաւութեան բոլոր պատրանքներով»:
Կ'ըսէ Պօղոս առաքեալ--Բ. Թես. Բ.9: Մարդիկ անիրաւութեան ծառէն երջանկութեան պտուղ չեն կրցած ֆաղել երբեք:

Անգլիա իր ֆաղափական ջահերուն (Կիպրոս կղզին ստանալու) համար, աչք գոցեց Կ. Պոլսոյ կառավարութեան անիրաւութիւններուն, կեղեքումներուն և վալրագութիւններուն, և թող տուաւ որ Հայերը ջարդուին: Անարդար ու զրպարտական մահը գերագոյն անարգանքն է որ կրնայ

վիճակուած ըլլալ անհատի մը կամ ազգի մը: Մեր Տիրոջ Յիուսի Խաչելութիւնը, այդպիսի՝ անիրաւ մահ մըն էր:

Համաշխարհի դրամատեր դասակարգը *ընկերային* անարդարութեան արմատն է, որ անիրաւօրէն կը գործածէ Ռամկավար դիմակը: **«Աստուծոյ Բարկութիւնը»** (Հոով. Ա.18) Զգացական գայրոյթի մը արտայատութիւնը չէ, այլ՝ ամբողջական ընդդիմութիւն մը չարիքին, մեղքին և անարդարութեան դէմ, որոնք անհաջտելի են Աստուծոյ բարութեան, սրբութեան և արդարութեան հետ: Կողմնակալ ձեռով արդարութեան պարտադրութիւնը նոր անարդարութիւններու դուռ կը բանայ:

Մինչեւ Զրիստոսի Մարդեղութիւնը, *Ճշմարտութիւն* բառը տեսաբանական երեւոյթ մըն էր, Զրիստոսով ան եղաւ ջօջափելի ու տեսանելի: Աստուած Իր Ինքնութեան մարդկային կերպար տուաւ, դարձաւ տեսանելի, ջօջափելի արտայայտութիւն՝ Մարդեղութիւն:

Անհատէն ու ընտանիքէն, կուսակցութենէ ու դասակարգէն բարձր կայ և պիտի մնայ ճշմարտութիւնը: Ան անհանգրուան է անսկիզբ և անվախճան: Դժբախտաբար իրաւունքը և ճշմարտութիւնը մնացած են գաճաճ հոգիներով մարդոց ձեռքը: Ճշմարտութիւնը՝ միաժամանակ իրողութիւն է, դէպք է և եղելութիւն, որ ո՛չ երէկ ունի, ո՛չ այսօր և ոչ ալ վաղը, այլ յաւիտենականութեան լոյսէն կ'առնէ իր մշտաճառագայթ ուժը: Այն որ ճշմարտութիւն է՝ միեւնոյն ատեն *Ճանապարհ* և *Կեանք* ալ է: Աստուած, փաստերու և պատճառներու օղակաւորումովը գտանելի ճշմարտութիւն մը չէ, այլ՝ **Տալանութիւն** է:

Երբ մարդ կորսնցնէ բացարձակին (Աստուծոյ) ըմբռնումը, մարդ կը կորսնցնէ Ճշմարտին ու կեղծին, սուտին և Ուղիղին իրականութիւնը: Եթէ մարդկային ըմբռնումը հանդէպ Ճշմարտութեան ենթակայական և յարաբերական է, ուրեմն ի՞նչ է ճշմարտութիւնը, ի՞նչ կրնայ ըլլալ ուղիղն ու սուտը:

Յիսուս Զրիստոս Ի՛նքն է ջօջափելի մարմնացումը, երկնային վսեմութիւնը, անկոխելի սրբութիւնը, միակ ճշմարտութիւնը, անմրցելի բարութիւնը, անմատչելի բարձրութիւնը, կեանքի մեծ Լոյսին և աստուածային Ոծութեան:

«Մեր ունեցողը միշտ կը զիջի».

«Ազատամտութեան» 20րդ Դարուն, ջրջուած են արժեչափերը: Յարգանքի, զիջումի և աստուածանուիրումի զգացումները կը նկատուին սկարութիւններ ու ոչ առաքինութիւններ: Զօրաւորը կը յաղթանակէ, սկարը կը զիջանի գտնելու համար խաղաղութիւն, փոխանակ անյայտանալու: Մեր ունեցողը միշտ կը զիջի... միշտ կը համբերէ, բարկութեամբ չի գրգռուիր,

"Մեր ունեցողը համբերատար կ'ըլլայ և ֆաղցրաբարոյ...»:

«Մեր ունեցողը միշտ կը հաւատայ»,

Ապրելու համար պէտք է հաւատալ կեանքի երկթեան և անոր նպատակին: Հաւատալ՝ խորհուրդի մը տիրացումն է որուն ստուգութեան փորձանիշը ինքն իր մէջն է: Ստուգութեան անդիմադրելի զգացումն է որ խանդավառ կը դարձնէ քրիստոնեան: "Հաւատալ" կը նշանակէ՝ հաւանիլ, կամենալ, վստահիլ և ընդունիլ Աստուծոյ իջխանութիւնը՝ վստահիլ Աստուծոյ խնամակալութեան:

Աստուծոյ չհաւատացող հոգին կրնայ ըսուիլ թէ գոյութիւն իսկ չէ առած դեռ: Ան կը նմանի ներարգանդեան վիճակի մէջ գտնուող մանկիկի մը, ինչպէս որ չծնած մանկիկը արգանդին մէջ անհասկնալի, ջիոթ ու խաւար գոյութիւն մ'ունի և ինքնութիւնը չէ ստացած, այնպէս է նաեւ անհաւատ հոգին: Այնպէս որ երբ հոգի մը անհաւատ կը մեռնի, կրնայ ըսուիլ թէ վիժեցաւ, այսինքն չծնած մեռաւ: Աստուած ճանաչելի է ո՛չ թէ զգայարաններով, այլ հոգիի աչքերով:

«Մեր ունեցողը միշտ կը յուսայ»,

Աստուծոյ սերն ու ներումը կ'ազնուացնէ ու կը բարձրացնէ մարդկային կեանքը և Անոր յուսադրիչ խոստումը կ'ազատէ մարդը հիասթափութենէ: Այսպիսի յոյս մը կու գայ մի միայն Աստուծոյ վերջնական յաղթանակի հաւատէն: Բժշկարար դարմանին եթէ հարիւրին տասը դեղն է, հարիւրին 90-ը հիւանդին տրուած թելադրանքը, յուսադրութիւնը և ֆաջալերանքն է:

Մարդ իր գոյութեան իմաստը կ'առնէ քրիստոնէական կրօնի յաւիտենական կեանքի յոյսէն: Յոյսը գօրութիւն է, յաջողութեան, ապագայի յառաջդիմութեան խարխիւր: Հաւատացեալին պարտականութիւնը յոյս ներշնչել է յուսահատին, խաղաղութիւն՝ հոգիով տառապողին, միխթարութիւն՝ սգաւորին:

Մեծն Աղեֆասանդր դէպի Արեւելք իր յառաջխաղացքը չ'ըրած, «Ամբողջ ունեցածը կը բաժնէ իր զօրավարներուն: Զօրավարները կը հարցնեն իրենց հրամանատարին ըսելով. «Բեզի ի՞նչ մնաց»: Մեծն Աղեֆասանդր կը պատասխանէ. **«ՅՈՅՍ»**:

Հաւատացեալի մը համար «յոյսը»՝ կենդանի *Անձնաւորութիւն* մըն է՝ յուսաւոր Յիսուս Քրիստոս մեր Լոյսը ու մեր Կեանքը: Քրիստոս է Լոյսը աշխարհի խաւարին դիմաց, Յոյսը կեանքի ալեկոծութեան մէջ, և փրկութեան Լաստը աշխարհի արիւնտ ծփանքներուն դիմաց: Յիսուսի խօսքերը ինծի եղան թեւաւորող փարոս մը՝ յոյսի և վստահութեան բուռն ցանկութիւն մը: Բսաներորդ Դարը եկաւ Մեծ Եղեռնով ու արհաւիրքով, իսկ ահա կը մեկնի

անսպասելի իրականացումներով և յոյսով՝ Հայաստանի անկախութեամբ:

«Մերը միշտ կը համբերէ (հանդուրժէ)»:

Տոկալ կարենալը առափնութիւն է ջարունակելը յաջողութեան պայմանն է: Յիսուս կը հանդուրժէ և կը բուժէ մարդկային գրեթէ բոլոր սկարութիւնները, բայց չի կրնար ներել կեղծաւորութեան: Ազատութեան և ժողովրդավարութեան հիմքը հանդուրժողութիւնն է տարբեր գաղափարաբանութիւններու և վարդապետութիւններու նկատմամբ: Ծարժառիթը և հիմը **սէքն** է՝ լայնախոհութիւն և փոխադարձ հանդուրժողութիւն:

«Մերը անվախճան (անսպառ) է»,

Վերջ չունեցող, մշտնջենաւոր, անանցանելի, այնպէս ինչպէս ժամանակը անսկիզբ է և անվախճան: Յաւերժալոյս **ՄԻՐՈՅ** յաւերժաճաճանչ և յաւերժազանգ Յարութեան ձայնը պիտի լսեն սուրբ նահատակները: Անկորնչելի պիտի մնան հաւատք, ոգի, գաղափար, իտէալ, տաղանդ, տեսիլք և այն բոլորը, որոնք անվախճան են: Աստուծոյ Մերը անալլալ և յաւերժական Իրականութիւնն է:

Բնագրին մէջ "անվախճան" բառը, ունի նաեւ *անջնդ, անկրէպ, անգործածական* ու *անյարթանարելի*: Իմաստը, այսինքն յաւերժական:

Կորիւն կ'ուզէ պատմագրել Աստուածաշունչը, դէպքերէն ու դէմքերէն անդին տեսնելու և ցուցնելու համար Անտեսանելին, Յաւերժական այն Իրականութիւնը որ Աղբիւրն է՝ խորութիւններու ընդերքներէն հոսող ճշմարտութիւնը՝ Յաւերժականէն հասնող ճաճանչներու խորհուրդն ու կեանքը: Մարդոց յիշողութեան մէջ՝ *արիւնու գլուխ*՝ ճշմարտութիւնները միայն կը յաւերժանան: Մեծագոյն և առարկայական գրութիւնը, Գողգոթայի բարձունքին վրայ, Յիսուսի յայտնաբերած սուրբ Խաչելութիւնն է՝ Աստուածային **Մերը**:

Մեր անզուգական և սրբազան հայրերու յիշատակը յաւերժացնելու համար ընթանալու ենք Ս. Մահակի և Ս. Մեսրոպի յառաջդիմութեան ջախդէն փոխանցելու համար մեր յաջորդներուն անոնցմէ ժառանգուած

Աստուածաշունչի սերտողութեան աւանդը աւելի գօրացած վիճակի մէջ: Աղօթքն ու սերտողութիւնը կը ծնանին հերոսներ, կը կերտեն ազատարարներ և կը դարբնեն նուիրեալներ, և կը պարգեւեն յաւերժացողներ:

Հաւատացեալին տարեդարձը պիտի փոխուի հարիւրամեակի, հազարամեակներու և անվախճան յաւերժութեան:

Յիսուսով անցեալը կը դադրի անցած ըլլալէ.

**Յիսուսով ներկան կը դադրի անցաւոր ըլլալէ.
Յիսուսով յաւերժութեան մը մուկն չը կը դառնայ Բայլերգ...:**

Տիեզերքի գոյութեան անսկիզբ և անվախճան տեսողութիւնը, պայմանաւորուած է նիւթին *անստեղծ և անուշ նշանայի* բնոյթով: Կ'ուզէ՞ք ըստ մը երջանիկ ըլլալ՝ վրէժ լուծեցէք. կ'ուզէ՞ք յաւիտեան երջանիկ ըլլալ ու սիրել՝ **ներեցէք**:

Միտոյ գոհաբերութեան պարտութիւնը՝ անվախճան յարթութեան մայրն է: Քրիստոս Աղբիւրն է, որոնելու և գտնելու յաւիտենականը անցաւոր ժամանակին մէջ: Գիտութիւնը չունի մէկ հատ իսկ յաւիտենական օրէնք:

1. Գիտութիւնը հիմնուած է *յարաբերական*, օրէնքներու վրայ:
2. Մանրամասնութիւն, կրամին և երկվայրկեանին, աշխինքն միջոցին, կշիռքին և ժամանակին վրայ:

Ներկան այն միջոցն է ժամանակին, որուն մէջ շարժումը, որ գորութեանական Հոգին է տիեզերքի, կ'ստեղծագործէ, կը ծննդագործէ, գործադրութեան կամ յօրինելու իրականացման հրամաններ կ'արձակէ: Ըմբոնումի այսպիսի դիտանկիւնը կը դառնայ յաւիտենական ներկան, ուր անցեալի ըմբոնումն ու ապագայի ակնկալութիւնը ներկայ տարածութեան ընդմէջ կը նոյնանայ: Այս է աստուածատես գիտակցութիւնը և ճանաչողութիւնը որ կը կոչուի **տիեզերական ներկան** կամ մեծ «ԳՈՅ»:

**«Մինչդեռ այս կեանքին հետ մարգարէական
պատգամները վերջ պիտի գտնեն, հրեշտակ-
ներու լեզուներով խօսիլը պիտի դադրի, գի-
տութիւնն ալ վերջ պիտի գտնէ»:**

Վերոյիշեալ գրութեամբ առաջեալը ցոյց կու տայ թէ ա՛յն ինչ որ հայրապետներ կը փայփայէին (դաւանանք, վարդապետութիւն, ուղղափառութիւն եկեղեցական ժողովներուն մէջ), երկրորդական պիտի նկատուին ու վերջ պիտի գտնեն **սիրոյ** վեհագոյն և սրբազան տպաւորիչ գորութեան առջեւ:

«Մարգարէական պատգամները վերջ պիտի գտնեն» - ը, ո՛չ թէ կը նշանակէ մարգարէութիւնները, այլ անոնց "պատգամները", աշխինք դաւանական ու վարդապետական մեկնաբանութիւնները որոնք պատճառ եղան հաւատքի կասեցման և իրարու դէմ եղած ատելութեան: Շատ դժուար է ընդունիլ գործուած սխալ մը, սակայն եթէ եկեղեցւոյ հայրապետները չընդունեցին իրենց գործած սխալները, գոնէ մե՛նք յետադարձ ակնարկով տեսնելու ենք իրենց անիմաստ վէճերը, որոնք Բայբայեցին Միացեալ եկեղեցին ու պատճառ դարձան որ Քրիստոնէութիւնը չտարածուի դէպի

Եկեղեցին ու պատճառ դարձան որ Զրիստոնէութիւնը չտարածուի դեպի Արեւելք:

«Լեզուներով խօսիչը պիտի դադրի» կը նշանակէ թէ անոնց **կարի՛ճը** պիտի դադրի, որովհետեւ անոնց գործունէութիւնը այլեւս իմաստ պիտի չունենայ:

«Գիտութիւնն ալ վերջ պիտի գտնէ»: Կը նշանակէ թէ **Ճշմարտութիւնը** պիտի գերազանցէ գիտութիւնը, որովհետեւ գիտութիւնը ճշմարտութեամբ կ'աւարտի ինչպէս տունկ մը իր ծաղիկով: Աստուածայայտնութիւնը կը սկսի այն տեղէն, ուր գիտութիւնը կանգ կ'առնէ: Գիտութիւնը տեսական ձեւափոխութեան մէջ է: Գիտութիւնը չունի մէկ հատ իսկ յաւիտենական օրէնք--ոչ բնագիտութիւնը, ոչ աստեղագիտութիւնը, ոչ ֆիմիաբանութիւնը և ոչ իսկ մաթեմատիկը ունին բացարձակ օրէնքներ:

Համալսարաններու մէջ ուսուցուած Գիտութիւնը հիմնուած է յարաբերական օրէքներու վրայ: Գիտութիւնը կրնայ վերականգնել մարդը արտաբնապէս որպէս **երեւոյթ**, բայց ոչ երբեք հոգեւոր, իմացակա՛ն ու **բարոյական մարդ**: Հոգեմտաւոր մարդը կը ճանչցուի՝ միա՛յն աստուածային տրամադրութեամբ: Ճանչցուած գիտութիւնը կամ հմտութիւնը՝ միայն երեւցած իրականութիւնն է: Ի՞նչու չհաւատալ իրականութիւններու որոնք մեր հասողութենէն դուրս, և ըմբռնելու կարողութենէն անդին են:

Պօղոս առաքեալ չոգիով ներշնչուած կը գրէ **Ճշմարիտ** գիտութեան մասին, ըսելով.

«Ասէն ինչ վնաս կը սեպեմ մեր Տէր Յիսուս Զրիստոսի գերազանց գիտութեան վերաբերմամբ: «Ճանչ նալ Զրիստոսը, Անոր Յարութեան զգրութիւնը, և Անոր չարչարանքներու ն մասնակից դառնալ»--Փիլիպ. Գ.8-10:

Հետեւաբար մարդկային՝ հողային սահմանումի վարագոյրը երբ վերցուի, Ճշմարտութիւնը կուլ պիտի տայ գիտութիւնը:

«Որովհետեւ ջատէն ֆիչը գիտենք և ջատէն ֆիչը կը մարգարէանանք»:

Վերոյիշեալ խօսքերը կը նշանակեն, թէ մեր ունեցած գիտութիւնն ու ուսուցումի նուաճումները հատուկապէս և բազմաբեկոր հմտութիւններ են **բողոջաժամբ** ա՛յն ճշմարտութեան, որուն պիտի տեղեկանանք հրաջափառ Յարութենէն յետոյ: Օրինակ, բնական աչքով երբ կը դիտէինք տարրերն ու երկնակամարի աստղերը, կը կարծէինք թէ գիտութեան վարպետներ ենք: Այսօր էլ եկտրոնիկ մանրադիտակն ու հեռադիտակը մեր առջեւ բացած են նոր և զմայելի աշխարհներ, որոնք բոլորովին ճշմարիտ ու իրաւ են: Պօղոս առաքեալին նախատեսութիւններն ալ նոյնաման ճշմարտութեան և

իրականութեան հաւաստիքներն են: Խոնարհի՛նք ու հաւատացողները ըլլանք **աստուածայա՛յա** վկայութեան:

**«Բայց երբ որ գայ կատարեալը՝
շատէն քիչը պիտի անհետանայ»:**

«Երբ որ գայ կատարեալը» կը նշանակէ թէ մարդկութիւնը կ'ապրի և կը յառաջանայ դէպի լաւագոյնին ու կատարեալին հասողութեան:

Քրիստոնէութիւնը յոյսի՛ և լոյսի՛ հաւատքն է: Մեր անգուգական և սրբազան հայրերու յիշատակը յաւերժացնելու համար ընթանալու ենք Ա. Սահակի և Ա. Մեսրոպի յառաջդիմութեան ջախդէն փոխանցելու համար մեր յաջորդներուն անոնցմէ ժառանգուած աւանդը աւելի զօրացած վիճակի մէջ:

Մարդիկ ինքնաշարժ կը վարեն այսօր, հեռախօս կը գործածեն, հեռատեսիլ ունին իրենց հիւրասենեակին մէջ ...: միթէ Աւելի լա՞ւ մարդիկ են, քան երէկուան մարդերը: Աւելի երջանի՞կ են: Ո՛չ երբե՛ք: Ոչ միայն երջանիկ չեն, այլեւ մոռցած են ուղիղ կերպով խորհելու կարողութիւնը: Ճշմարիտ գիտութիւնը, վայելքը և երջանկութիւնը պիտի գայ չարին պարտութեամբ, երբ մեր Տէրը Յիսուս վերադառնայ:

**«Երբ տղայ էի՝ տղու պէս կը խօսէի, տղու պէս
կը խորհէի, տղու պէս կը դատէի. իսկ երբ այր
դարձայ՝ տղայական բաները մէկ կողմ ձգեցի»:**

Մեզմէ քանիներ՞ը կը յիշեն իրենց տղայութիւնը, և քանիներ կը յիշեն իրենց տղայութենէն չափահաս դառնալը: Մարդկութեան մէջ անհամար են անոնք, որոնք երբեք չափահաս չեն դառնար: Ինչո՞ւ, որովհետեւ լաւագոյնը՝ չափահասութիւնը չեն կրնար տեսնել: Հաւատացեալը կը փախ յառաջ, այսօր՝ ցաւը սրտին, վաղը՝ կեանքի ջահն ու քնարը ձեռքին, որովհետեւ ան իր հոգիի աջգերով կը տեսնէ անտեսանելին ու ներշնչումով կ'իմանայ երկնամեղեդին:

«Հիմա կը տեսնենք աղօս՝ ինչպէս հայելիին մէջ»:

Յիսուսատես Պօղոս իր առաքելական պարթեա հասակով ու բազմամուտ տեսիլներով կը խոնարհի Բացարձակին ու կատարեալին առջեւ ու կը խոստովանի ըսելով. **«կը տեսնենք աղօս»:**

Խոնարհութիւնը քրիստոնէական այն չքնաղ առաքինութիւնն է, որով անհատ մը իր անձին գիտակցութիւնը կ'ուսննայ: Ան կը գիտակցի թէ ի՛նչ որ ունի, ի՛նչ որ է Արարչին տուրքն է, Աստուծոյ ջնորհքն է: Խոնարհութիւնը շփոթելու չէ նուաստութեան հետ, ստորնութեան և վախկոտութեան հետ:

Աշխարհահռչակ Թոմասինի՛ իր երգչախումբին հետ՝ Պեթովէնի

Իններորդ Համերգին վարժութեան փորձերը կ'ընէր Նիւ Եորքի Ֆիլհարմոնիք թատրոնին մէջ: Ան իր երգչախումբին այնպիսի ներշնչում մը տուաւ որ փորձի վերջաւորութեան՝ երաժիշտները ոտքի ելլելով խելայեղօրէն ծափահարեցին զայն: Թոսեանինի ի զուր ջանաց զանոնք կեցնել: Երբ ծափահարութիւնը դադրեցաւ, Թոսեանինի երերուն ձայնով և արցունքոտ աչքերով ըսաւ. «Բարեկամներ, ես չեմ... Պեթովէնն է: Պեթովէնը ամէն բան է, իսկ Թոսեանինի ոչինչ է»: Իրական մեծ մարդիկը *խոնարհ* են:

Յիսուս Բրիստոս յաւերժօրէն կ'ըսէ, Բեզի և ինձի. *«Իմ լուծու ձեր վրայ առէ՛ք և սորվեցէ՛ք Ինձմէ, որ հեզ եմ և սրտով խոնարհ և ձեր անձերուն հանգիստ պիտի գտնե՛ք, որովհետեւ իմ լուծու քաղցր է և իմ բնու՛թեթեա»*: Յիսուսի Յարութիւնը լոյսի յաղթանակն է իսաւարի վրայ, անմահութեան զօրութիւնն է մահուան վրայ, յաւերժական կեանքի իշխանութիւնն է մեռելութեան վրայ, սիրոյ յաղթանակն է ստելութեան վրայ, և բարութեան յաղթութիւնն է չարութեան վրայ:

Վերեւ յիջուած հատուածներուն ընթերցումը, ակամայ կ'անդդարձնեն զիս առաքելաշարժող կարգ մը հայրապետներուն և Միջին Դարու հպարտ, ամբարտաւան ու դաւանանք և վարդապետութիւն ջարդարող հաւատաբաննիչներուն: Բրիստոնէութեան յառաջխաղացքը կասեցաւ, ո՛չ թէ Իսլամութեան զօրութեամբ, այլ քրիստոնեայ կոչուող ազգերու անսէր գոռոզութեան պատճառաւ:

«Բայց այն տտեն պիտի ըլլայ երես առ երես»:

«Այն տտեն»։ Յոյսի և սպասումի հոգի մը ունի Պօղոս առաքեալ ու կը սփռէ զայն իր շուրջը գտնուած հաւատացեալներուն: Ան յոյս կը ներշնչէ յուսահատին, խաղաղութիւն՝ հոգիով տառապողին, և միսիթարութիւն՝ սգաւորին: Յիսուս Բրիստոսի Յարութեան յոյսը՝ ժամանակի շրջագծին մէջ՝ պիտի ըլլայ վաղուան յաւիտենական ստուգութիւնը:

«Այն տտեն պիտի գիտնամ այնպէս՝ ինչպէս որ Ան ճանչցաւ զիս»:

Հոգեկան Լոյսը կ'առաջնորդէ ո՛չ միայն գիտնալու և ճանչնալու, այլ ճանչցուած Մէկը իւրացնելու, զԱյն ապրելու և Անոր նմանելու: Հայ հաւատացեալ ժողովուրդին համար Յիսուս Բրիստոս վախճանած սուրբի մը պատկերը չէ, նահատակ հերոսի մը յուշակոթողը չէ և ոչ ալ հանճարեղ գիտնականի մը հոյակերտ արձանը, այլ Աստուծոյ մարմնացած ու մարդացած Որդին է Ան:

Ապրումներ և գաղափարներ կը հարստանան և արժէք կ'ստանան երբ

հեղինակը կամ բանաստեղծը կ'ապրի ցաւին, երանութեան և ոգեւորութեան հարազատութիւնը: Ո՛րվ Քրիստոս ցոլացուր Ինքզինքդ մեր ապրումին մէջ: Մարդկային յայտնագործութիւններու կատարը, Յիսուսի ճանաչումն է որպէս Փրկիչ և Տէր: Յիսուսի վերջին կտակը Իր աշակերտներուն եղաւ հետեւեալը. **«Ընդ ճանչցուցի անոնց և պիտի ջարու նակեմ ճանչցնել.»** --Յով. ԺԷ.26:

***Մարդկային յայտնագործութիւններու կատարը
Յիսուսի ճանաչումն է որպէս Փրկիչ և Տէր***

**«Արդ՝ կը մնան հաւատք, յոյս, սէր.
այս երեքը. բայց ասոնցմէ մեծը սէ՛րն է»:**

Պօղոս առաքեալ, որպէս սրբազան բանաստեղծ, մագլցած ու բարձրացած է աստուածամերձ Մինա լեռը: Փոխանակ հանդիպելու Կիզող Մորենիի Օրէնսդրին Մովսէսի, ան կը գտնէ աստուածայայտնութեան երեք մնայուն հանգամանքները՝ **հաւատք, յոյս և սէր:**

Աջխարհի նշանաւոր օրէնսդիրները եղան՝ Լիկուրգոսը Սպարտայի, Մոլոնը՝ Աթէնքի իսկ Մովսէս՝ Հին Կտակարանի: Ամենահին օրնսդիրը, որ Մովսէսէն մօտ հազար տարի առաջ կ'ապրէր, եղաւ Բաբելոնի թագաւոր Համմուրային:

Լեբան Բարոզի սկզբնաւորութեան, Յիսուս կ'ազդարարէ թէ Օրէնքը պարտ է ըմբռնել Նոր Ուխտի շնորհիով: Յիսուսի անձին մէջ Աստուծոյ Խօսքը (օրէնքը) կրկնուեցաւ ոչ թէ Մինայ լեբան վրայ, այլ **Երանելիներու Լեբան** վրայ: Յիսուս չջնջեց Օրէնքը, այլ տուաւ անոր գերագոյն մեկնաբանութիւնը ու ճշմարտապէս իրագործեց զայն: Յիսուս ըսաւ. **«Հոգի է Աստուած, և Անոր երկրպագու ներք պէ՛տք է հոգիով և ճշմարտութեամբ զձկն պաշտենալ»:** Ինչպէ՞ս **«Մովսէսի Օրէնքը և մարգարէներու ուսուցումները մինչեւ Յովհաննէս Մկրտիչ ի գօրու էին»** ըսաւ Յիսուս--Ղուկ. ԺԶ.16:

Աստուծոյ պահանջները կը յառաջանան, օրինականէն դէպի բարոյականը, և բարոյականէն դէպի հոգեւորը: Կեանքը իր իսկութեան մէջ հոգեւոր է և բարոյական սկզբունքներով կը կառավարուի: Երեք հոգեւոր հիմքեր որոնք գոյատեւութիւն տուին Հայութեան՝ են. **հաւատք, յոյս և սէր առ Աստուած:** Հոգեւոր կոչուած ամենավսեմ հարցերը թանձրացեալ չեն, շօշափելի և տեսանելի չեն, այլ **զգալի և իմանալի** միայն հոգեկան կարողութեամբ: **Նորհարոյք:** ըմբռնելի չէ մարդկային զգայարաններով, սակայն տեսանելի է հոգեւոր աչքով՝ հաւատքով: Պայծառակերպութեան լեբան վրայ Պօղոս առաքեալ հոգեփոխուած և հոգեխառնուած է Յարուցեալին ապրումին ու զոհողութեան Հոգիին հետ, ու սոյն ներշնչումի գօրութեամբ կը բացականչէ. **«Արդ՝ կը մնան հաւատք, յոյս, սէր. այս երեքը. բայց ասոնցմէ մեծը սէրն է»:**

Ինչո՞ւ մեծագոյնը **ՍԷՐՆ** է:

Յիսուս Իր փրկարար Յարութենէն յետոյ հանդիպեցաւ ձկնորս աջակերտներուն ու կերակրեց զանոնք ծովափի աւազին վրայ: Յիսուս և Պետրոս երբ առանձինն էին, յաղթական Յարուցեալը հարցում մը ուղղեց Պետրոս աջակերտին: Հեզահամբոյր Յիսուս չյանդիմանեց Պետրոսը որ Ձինք ուրացած էր: Խոստովանանք և ապաշխարութիւն չպահանջեց Իր աջակերտէն, այլ արջալոյսին պէս բնեոյշ Յիսուս հարցում մը ուղղեց Պետրոսին, որ աւելի հզօր էր ու սարսուզողեցիկ քան խոստովանութիւնն ու ապաշխարութիւնը:

Յիսուս Իր ապրումէն հորիզոն մը բացաւ և հարցուց Պետրոսին, ըսելով. **«Սիմո՛ն Յովնանի, կը սիրե՞ս զիս»:** Յիսուս երեք անգամ ըրաւ նոյն հարցումը: Լուսայորդ Յիսուսի կարեկից Խօսքերը, Անոր Աջին հպումը, Անոր Նայուածքի սեւեռումին ազդուութիւնը և մանաւանդ արդարութիւն և իրաւունք պահանջող Խօսքերը ամփոփուած ու խտացուած էին **ՍԵՐՈՅ** մէջ: Եթէ կը սիրես զԱստուած կարի՞քը չունիս խոստովանելու կամ ապաշխարելու: Եթէ կը սիրես զԱստուած պէտք չունիս այլեւս վախնալու:

ՍԷՐԸ ԼՐՈՒՄՆ Է ՕՐԷՆՔԻՆ:

Հին Կտակարանի մարգարէներուն մէջ Ովսէն առաջին մարգարէն է, որ կ'արտայայտէ Աստուծոյ գուրգուրանքը **«ՍԷՐ»** բառով--ԺԱ.4: Սէր բառը չէ եղած *հարուցուելու* համար, այլ՝ *կիրարկուելու*, կամուրջ մը հաստատելով սիրողի և սիրուողի միջեւ: Կեանքին միակ իմաստութիւնը՝ բարութիւն է և սէր:

Աստուածաբաններ կը հետաքրքրուին Աստուծաշունչի գրականութեան վերաբերեալ հարցերով և հեղինակներով, ոչ Աստուծաշունչին պատգամովը: Յիսուս Ինքզինք կը կոչէ "Աստուծոյ Խօսք"ը, "Քանն Աստուծոյ", ոչ թէ *գրութիւն մը*, այլ իմաստաւորող և ապրող Անձնաւորութիւնը՝ Մեկնաբանութիւնը: Ոչ թէ ո՞վ գրած է Ս. Գիրքը, այլ ո՞վ յայտնաբանած է զԱստուած: Յիսուս Քրիստոս ապրեցաւ որպէս կենդանի Աստուծաշայտնութիւն և հայելացումը **ՍԷ՛Ր** Աստուծոյ:

Սէրը ծով մըն է, այնքան խորունկ, որքան բունը, այնքան բարձր՝ որքան երկինքը:

Սէրը կեանքին իմաստն է, կեանքը սիրոյ արտայայտութիւնը:

Սէրը՝ կարթն է հոգիներ որսալու, սրտով՝ սիրով:

Սէրը գիտէ ծաղիկներ բանալ թէ՛ գարնան և թէ ձման մէջ:

Սէրը ոսկի բանալին է արքայութեան, իսկ զոջումը՝ գինը փրկութեան

Օրէնքները բրտութեան կը տանին, իմաստութիւնը՝ տրտմութեան, իսկ

Սէրը՝ յաւերժութեան:

Սէրը կը հերոսանայ, հաւատքը կը սրբանայ, զոհողութիւնը կը

դիւցազնանայ:

Մերը կրակ մըն է որ ելթէ անով ուրիշները չվառես՝ կը մարի:

Մերը կարելի չէ բառերով արտայայտել: Մերը կ'արտայայտուի գործով,
արարքով և զոհաբերութիւնով:

Հօր Աստուծոյ սէրը հանդէպ իր Որդւոյն՝ պատուանդանն է տիեզերքին ու
երաշխիքը մարդոց փրկութեան:

Խաչելութեամբ, Յիսուս Հօր Աստուծոյ սէրը կը գծէ Գողգոթայի վրայ:

Աստուծոյ սէրը բառերով չի բացատրուիր, թուանշաններով չի չափուիր,
զգացումներով չի թարգմանուիր:

Աստուծոյ սէրը նիւթական բան մը չէ, որ վաճառուի և ոչ ալ մասնագիտու-
թիւն մը, որ ուսանելով ստացուի:

Աստուծոյ ներում ջնորհող սէրը կը յաղթէ բոլոր մեղանշումները մարդ
արարածին:

Տառապող սէրը հզօրագոյն ուժն է քրիստոնեային:

Մի՛ սպասեր սիրուիլ, կրնա՞ս սիրել՝ սիրէ՛: Մի՛ ակնկալեր առնել,
կրնա՞ս տալ՝ տո՛ւր: Մի՛ սպասէր փնտրուիլ, կրնա՞ս փնտրել՝ փնտրէ՛:
Հաւատալն ու սիրելը այն զոյգ ճառագայթարձակ ջողերն են, որոնք կը
սրբացնեն մարդը և տեսանելի կը դարձնեն Անտեսա- նելին:

Մեղտեմբեր 13, 1997

Թորոնթօ